



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

“29” 09 2017 թ.
ք.Երևան

N 1073-Ձ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի
ԹԻՎ 8 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 762 որոշմամբ հաստատված կարգի պահանջների՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային հանձնաժողովի 2017 սեպտեմբերի 13-ի թիվ 8 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Մինչև նոր մրցույթի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը լիազորել.

1) ԱԶ Արա Տոնոյանին՝ «Սարչապետ-Երևան» թիվ 443 միկրոավտոբուսային երթուղով ժամանակավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու համար:

2) «Ալեքս և Մանվել» ՍՊ ընկերությանը՝ «գ.Մրգաշեն-Երևան» թիվ 271 ավտոբուսային երթուղով ժամանակավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու համար,

3. «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Գարբուզյանին՝ միջմարզային ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների սպասարկման պայմանագրերում կատարել սույն հրամանի հավելվածից բխող փոփոխություններ:

4. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնի պետ Ս. Մամյանին՝ սույն հրամանը տեղադրել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ինտերնետային կայքում:

**ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

“29” 09 2017թ.
ք.Երևան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

**Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր
օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն
իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի**

13.09.2017թ.

ք. Երևան

2017 թվականի սեպտեմբերի 13-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության «Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ՝
նախագահի տեղակալ՝
քարտուղար՝
անդամներ՝

Դ. Մելքոնյանը,
Ա. Սահակյանը,
Ա. Կարապետյանը,
Ա. Զեյրանյանը,
Տ. Գասպարյանը:

Օրակարգում՝

1. «Հվարթնոց օդանավակայան-Երևան» թիվ 201 ավտոբուսային երթուղում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի մասնակցության համար հայտ ներկայացրած ընկերությանը հաղթող ճանաչելու հարցը:

2. «Էջմիածնի ԲՈՒԱՏ» ԲԲ ընկերության «գ.Նալբանդյան-Երևան» թիվ 224 միկրոավտոբուսային երթուղու սպասարկմանը տրանսպորտային միջոց ներգրավելու մասին գրությունը:

3. ԱԶ Արա Տոնոյանի «Սարչապետ-Երևան» N 443 միկրոավտոբուսային երթուղին ժամանակավոր սպասարկելու մասին գրությունը:

4. «գ.Մրգաշեն-Երևան» թիվ 271 ավտոբուսային երթուղու սպասարկման ժամկետի ավարտի կապակցությամբ երթուղու հետագա սպասարկման հարցը:

5. «Գալակտիկա Տրանս Սերվիս» ՍՊ ընկերության «Երևան-գ.Օրգով» թիվ 511 ավտոբուսային և «գ.Օրգով-Երևան» թիվ 512 միկրոավտոբուսային երթուղիների սպասարկումից հրաժարվելու մասին գրությունը:

6. «Սև Կակաչ» ԱԿ-ի «Սպիտակ-Երևան» թիվ 405 ավտոբուսային երթուղու սպասարկումից հրաժարվելու մասին գրությունը:

7. «Գրիշա Ազիզյան» ՍՊ ընկերության «Երևան-Եղեգնաձոր-Վայք» թիվ 555 միկրոավտոբուսային երթուղում շահագործվող տրանսպորտային միջոցների փոխարինման հայտը:

Որոշվեց՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող